

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ԱՐԳԵՍԻ ԻՆՍԻՏՈՒՏ

НАЦИОНАЛЬНАЯ АКАДЕМИЯ НАУК
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
ИНСТИТУТ ИСКУССТВ

ԳԵՎՈՐԳ
ԳՅՈՒՂՑԱՆԻ
ՏՊԱԳԻՐ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ



БИБЛИОГРАФИЯ
ПЕЧАТНЫХ РАБОТ
ГЕОРГИЯ
ГЕОДАКЯНА

ԵՐԵՎԱՆ

ԵՐԵՎԱՆ

2004



СОВЕТСКОЕ АКАДЕМИЧЕСКОЕ
ИЗДАНИЕ
ПОЛИТИЧЕСКОЙ
ФИЛОСОФИИ

ФОНДАЦИОННАЯ


ТОВАРЩИСТВА

ФОНДОВЫЙ

АКЦИОНЕРНЫЙ

ФОНД Н.М. КИРСАНОВА

Издательство Академии Наук СССР



НАЦИОНАЛЬНАЯ АКАДЕМИЯ НАУК
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
ИНСТИТУТ ИСКУССТВ

**БИБЛИОГРАФИЯ
ПЕЧАТНЫХ РАБОТ
ГЕОРГИЯ
ГЕОДАКЯНА**

Вступительная статья М.Р.Навояна
Библиография составлена А.Г.Асатрян

Издательство «Гитутюн» НАН РА
ЕРЕВАН 2004

929: 78 (478, 25) Գյուղական

ԵՐԵՐԾՈՒՅՑ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ԱՐՎԵՍՏԻ ԽՆԱՏԻՏՈՒՅ

**ԳԵՎՈՐԳ
ԳՅՈՒՄԿՅԱՆԻ
ՏՊԱԳԻՐ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ**

Ներածական՝ Մ.Նավոյանի
Մատենագիտությունը կազմել է Ա.Ասատրյանը

A/II
89642



ՀՀ ԳԱԱ «Գիտություն» իրատարակչություն
ԵՐԵՎԱՆ 2004

Տպագրվում է ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի գիտական խորհրդի
որոշմամբ

Печатается по решению Ученого совета Института искусств НАНРА

Պատասխանատու խմբագիր Մ.Նավոյան
Ответственный редактор М.Навоян

Մատենագիտությունը ամփոփում է 1951-2003 թվականների հրատարակությունները: Խորագույքի բովանդակությունը լիարժեք դարձնելու համար տրվում են [] մեջ առնված բացարձություն-լրացումներ:

Библиография содержит публикации 1951-2003 годов. Для большей ясности к отдельным названиям работ приложены взятые в квадратные скобки дополнения

ԳԵՎՈՐԳ ՇԱՍՎՈՆԻ ԳՅՈՒԱԿՅԱՆ

Հայաստանի արվեստի վաստակավոր գործիչ, պրոֆեսոր Գևորգ Շմավոնի Գյողակյանը հայ արդի երաժշտագիտության ամենախոշոր ներկայացուցիչներից է: Նրա գիտական, կրթական, երաժշտական-հասարակական վաստակն արժեորվում է հայ երաժշտագիտական դպրոցի ամբողջ պատմության համատեքստում և օրգանապես ներկայություն նրա պատմական զարգացման տրամաբանությանը:

Դեռևս XVIII-XIX դարերի սահմանագծին վերելք ապրող հայ երաժշտատեսական միտքն իր հետազա զարգացումներով մաս կազմեց ընդհանուր հայագիտական դաշտի՝ այնպիսի մեծանուն հեղինակների շնորհիվ, ինչպիսիք էին Ե.Տնտեսյանը, Կոմիտասը և այլք: Խորհրդային շրջանում, հայ նոր երաժշտագիտական դպրոցի ձևավորման գործում կարևոր դեր խաղացին մի շաք նշանավոր երաժիշտներ, որոնց շարքում առանձնանում են Ա.Շահվերդյանը, Ք.Չուշնարյանն ու Գ.Տիգրանովը: Նրանց բողած գիտական ծանրակշիռ վաստակն արժեորվեց, դարձավ երաժշտական հայագիտության կարևորագույն օդակ, ամուր և փաստարկված հիմք՝ իրենց իսկ կրթած անվանի գիտնականների աշխատությունների համար:

Այդ գիտնականների թվում են Ռ.Աքայանը, Մ.Քրուտյանը, Ն.Թահմիզյանը և անցյալ դարի հիմնականներից գիտական գործունություն սկսած Գ.Գյողակյանը:

Գ.Գյողակյանը հայ ժամանակակից երաժշտագիտության մեջ բարձր շափանիշներ սահմանած հեղինակություն է, ում մասնագիտական կարողությունները հղկվել են դեռևս Պ.Չայկովսկու անվան միջնակարգ մասնագիտական երաժշտական դպրոցից:

1951-1952 թվականներին ավարտել է Կոմիտասի անվան պետ. կոնսերվատորիան երկու մասնագիտությամբ՝ որպես դաշնակահար և երաժշտագետ, ուսանելով նշանավոր պրոֆեսորներ Գ. Սարացյանի և Գ. Տիգրանովի դասարաններում: 1953-ից եռամյա ասպիրանտական կրթությունն անցել է Մոսկվայի Պ. Չայկովսկու անվան կոնսերվատորիայում՝ պլոֆ. Բ. Յարոսլավովսկու դեկանավարությամբ:

Իր գիտական կենսագրության հենց սկզբից՝ 1957-ից, Գ. Գյողակյանի գործունեությունը կապված է Հայաստանի ԳԱ արվեստի ինստիտուտի հետ, որտեղ ցայսօր շարունակելով գիտական աշխատանքը, վարել է գիտական քարտուղարի, երաժշտության բաժնի վարիչի (1965-ից), ապա գիտական գծով փոխտնօրենի (1979-ից) պաշտոնները:

1960 թվականին լույս տեսավ Գյողակյանի «Ռոմանոս Մելիքյան: Կյանքը և ստեղծագործությունը» մենագրությունը: «Հենց այդ առաջին խոչոր աշխատության մեջ, - գրում է երաժշտագետ Մ. Տեր-Միմոնյանը, - ակնհայտորեն դրանու վեցին Գյողակյան գիտնականի ամենաարժեքավոր հատկությունները. նյութի խոր իմացություն, ինքնուրույն դիրքորոշում, հարցի յուրովի լրաբանում: Երիտասարդ գիտնականը, տուրք չտալով ընդունված տեսակետներին, առաջ քաշեց իր տեսակետները, ըստ որոնց Ռոմանոս Մելիքյանը ներկայացավ որպես հայ երաժշտության 20-րդ դարի մասշտաբային դեմքերից մեկը»:

Բազմաթիվ նյութերի (նամակներ, ժամանակակիցների հիշողություններ, պարբերական մամուլ և այլն) մանրագին ուսումնասիրման հիման վրա գրքում ճշտված են Ռոմանոս Մելիքյանի կենսագրության փաստերից շատերը, մանրամասն լրաբանված են նրա գեղագիտական հայացքները, մշակույրի գործիչների հետ ունեցած ստեղծագործական կապերը: Հետազոտողի ուշադրության կենտրոնում է կոմպոզիտորի ստեղծագործության էվոլյուցիան, «Աշնան տողեր», «Զմրուխտի», «Զառ-վառ» երգաշարերի երաժշտառնական առանձնահատկությունների

Վերլուծությունը: Այդ վերլուծություններում հեղինակը նրբազգաց կերպով և գիտականորեն հիմնավորված բացահայտում է կոմպոզիտորի նորարարական նվաճումները հարմոնիայի, ֆակտուրայի, հնչյունային երանգավորման բնագավառում, որոնք կարևոր նշանակություն ունեցան հայ պրոֆեսիոնալ երաժշտության ազգային ռեժի հաստատման գործում:

«Ակնարկ հայ երաժշտության պատմության» ուսումնասիրության մեջ (Զ. Զուշնարյան, Մ. Մուրադյան, Գ. Գյողակյան, Երևան, 1963) Գյողակյանը սովետահայ երաժշտությանը նվիրված բաժնի հեղինակն է:

Դա մեր երաժշտագիտության մեջ տվյալ թեմատիկայով ստեղծված առաջին ընդհանրացնող աշխատություններից է: Լուսաբանելով ձևերի, ժանրերի, ստեղծագործական գրելառների բազմազանությունը՝ Գյողակյանը ստեղծում է սովետական այդ շրջանի (1920-1950-ական թվականներ) ազգային երաժշտության զարգացման բարդ ուղղությունները:

Հետագայում էլ սովետահայ երաժշտության թեման շարունակեց մնալ առանցքային Գյողակյանի աշխատությունների մեջ: Նա դեկավարում է «ԽՍՀՄ ժողովուրդների երաժշտության պատմություն» բազմահատորյակում հայ երաժշտությանը նվիրված բաժինների ստեղծման աշխատանքը, 2-րդ, 4-րդ և մասամբ 5-րդ հատորներում հանդիսանում է այդ բաժինների հեղինակը: Նրա գրչին է պատկանում նաև սովետահայ երաժշտական մշակույթի պատմության ակնարկը «Սովետական Հայաստանի արվեստը 60 տարում» ժողովածուում: Նյութի քննական վերլուծությունը և ընդհանրացումը օգնում են գիտնականին ցույց տալ սովետական շրջանի հայ երաժշտության զարգացման հիմնական միտումները: Մեղմ, խտացված շարադրանք, մտածողության պատմականություն, ստույգ և ճշգրիտ գնահատականներ՝ ահա Գյողակյանի այս աշխատությունների հիմնական արժանիքները:

Գ.Գյողակյանի գիտական կարևորագույն սկզբունքներից մեկը դրսորվում է երևոյթներն ու անհատականությունները համամշակութային ենթատեսատում, համաշխարհային երաժշտական արվեստի ետնախորքի վրա, դրանց օրինաչափությունների գուգահեռականությամբ, պատմական ընթացքի տրամաբանությամբ քննելով։ Այդպիսի քննույթ ունեն Ալ.Սպենդիարյանին, Ա.Խաչատրյանին և, հատկապես, Կոմիտասին նվիրված ուսումնասիրությունները։

«Ալմաստ» օպերան» պատմական-քննադատական ակնարկը «Ալեքսանդր Սպենդիարյան» ժողովածուում (1973), ինչպես գրել է երաժշտագետ Մ.Բերկոն, - «իրենից ներկայացնում է սուր, խորարդականց, սկզբունքային հայացք դեպի սպենդիարյանական ստեղծագործության գլխավոր գիծը։ Ակնարկում հատաքրքի և համոզիչ կերպով քննվում է կոնպոզիտորի ստեղծագործական անհատականության ձևավորման ընթացքը։ Ծիշտ են քվում նրա կենսագրության՝ նորովի լուսաբանված փաստերի գնահատականները, իրեն ժամանակակից արվեստի ոլորտում իշխող փոխհարաբերությունները... Չափազանց կարևոր է, որ հոդվածում վերլուծված է Սպենդիարյանի տեղը՝ իբրև 20-րդ դարի արվեստագետ, մատնանշված են դարասկզբի փոթորիկների և որոնումների մեջ կոնպոզիտորին հետամտող վտանգները։ Դրանով ավելի նշանակալի է ընդգծվում Սպենդիարյանի ստեղծագործության ամենակարևոր շրջանը՝ ներաճումը հարազատ ժողովրդի մշակույթի մեջ։

Ակնարկի մեծ բաժինը նվիրված է «Ալմաստ» օպերայի ճակատագրին։ Հեղինակը հետևողականորեն և փաստարկված շարադրում է իր տեսակետը օպերայի հայեցակարգի, նրա կերպարների դրամատուրգիայի առանձնահատկությունների վերաբերյալ, պաշտպանելով սպենդիարյանական մտահղացումը «ուղղումներից» և չափից ավելի ուղղագիծ մեկնարանություններից։ Գ.Գյողակյանը բացահայտում է «Ալմաստի» հոգերանական, պատմական

առանձնահատկությունների բարդությունը, և նրա ապացույցների հետ դժվար է շահմածայնել»:

Ա.Խաչատրյանի մասին աշխատություններում Գյողակյանը ընդգծում է կոմպոզիտորի ստեղծագործության վառ ազգային և նորարարական բնույթը:

Վերլուծելով Խաչատրյանի երաժշտության լադա-հարմոնիկ համակարգը, Գյողակյանը կարևոր տեսական ընդհանրացումներ է անում, հիմնավորելով այդ համակարգի նորարարական էությունը: Խաչատրյանի երաժշտական ռճի հիմքը նա տեսնում է հայ (և ավելի լայն առումով՝ արևելյան) երաժշտության լադային համակարգի և ժամանակակից քրոմատիկ (պանդիասոնիկ) տոնայնության զուգակցման մեջ: «Եվ միշտ այն (զուգակցումը) հանդես է զալիս, - եզրակացնում է նա, - որպես օրգանական սինթեզ, անքակտելի ամբողջություն, ուր մեղեդու արևելյան կերտվածքը երևան է հանում քրոմատիկ տոնայնությունը, իսկ մյուս կողմից ինքն է բացահայտվում նրա միջոցով: Այդ սինթեզի գյուտը դարձավ դարի ամենաերևելի արվեստագիտական կոակումներից մեկը» (Традиционное и новаторское в музыке А.Хачатуриана, Музыкальный современник, Выпуск 3, Москва, 1979):

Երևույթները, նույնիսկ արդեն դիտարկված, առնվազն նոր գիտական հատույքով քննելու խնդիր է լուծել Գ.Գյողակյանն իր գիտական գործունեությամբ, իսկ առավելագույնս՝ սեփական տեսությունն է հիմնավորել հայ երաժշտա - տեսական մտքի պատմության մեջ:

Արդեն շուրջ երկու հարյուր տարի է, ինչ հայ երաժշտական միջնադարագիտության առջև ծառացած մեծ հիմնահարցը մնում է խազերի վերծանման խնդիրը: Հայ և օտար անվանի գիտմական-ների շանքերը ցայսօր վերջնական նպատակակետին չեն հասել այս բնագավառում: Գ.Գյողակյանն այն քիչ գիտմականներից է, ում ուսումնասիրությունները զգալիորեն առաջ մղեցին արդի

մերոդարանական նոր նոտեցումների շնորհիվ (“Возможные пути расшифровки армянской хазовой нотописи”, “Традиции и современность, вопросы армянской музыки” ժողովածու, գիրք 2, Երևան, 1996, կազմող՝ Գ. Գյողակյան):

Գ. Գյողակյանի գիտական վաստակի, ըստ իս, առավելագույն նվաճումներից է «մետալայի տեսությունը»:

Եթե ապագայում հնարավոր դառնա շարադրելու հայ երաժշտական մտքի զարգացման ամբողջ ընթացքը, ապա այն, ընդհանուր առմամբ, մեզ կներկայանա Դավիթ Անհաղի երաժշտա - տեսական դատողություններով, հայ միջնադարյան մյուս երաժիշտ - փիլիսոփաների հարուստ ժառանգությամբ, ապա նոր ժամանակներում Հ. Լիմոնջյանի ստեղծած նոտագրությամբ, հայ երաժշտության ինքնությունը հաստատող Կոմիտասի տեսական հայտնագործումներով և XX դարի հայ գիտանկանների մշակած տեսական համակարգերով, որոնց շարքը եզրափակում է Գ. Գյողակյանի հիշյալ տեսությունը:

Հայ ժողովրդական երաժշտական արվեստի մի քանի հազար նմուշների հետազոտությամբ հիմնավորված տեսական ուսմունքը հարաբերելի է XX դարի երաժշտա - տեսական մտքի ամենաբարձր մակարդակին: Վերջապես, այսչափ ընդհանրացված տեսությունը վերահաստատում է երաժշտության փիլիսոփայական բնույթը և այն կարող է առնչակցել խմացարանության բարդ ոլորտներին, ինչպես նաև՝ մի շաբ այլ հիմնարար գիտությունների (“Черты ладовой системы армянской народной музыки”, “Традиции и современность, вопросы армянской музыки”, ժողովածու, Երևան, գիրք 1, 1986, կազմող՝ Գ. Գյողակյան, “Функциональные связи тонов в звуко – высотной системе армянской народной музыки”, նույն ժողովածու, գիրք 2, Երևան, 1996, կազմող՝ Գ. Գյողակյան):

Այսօր կարող է քվալ թե Կոմիտասը, որպես հայ դասական երաժշտության և հայ ազգային - դասական կոմպոզիտորական դպրոցի հիմնադիր, սկզբից ևեր ընկալվել է իր պատմական նշանակությամբ, ժառանգության գեղարվեստական լրիվ արժեքով։ Սակայն, կոմիտասագիտությունն էլ իր զարգացման ընթացքն է ունեցել։ Այդ ընթացքը սկզբունքորեն ուղղորդած և կազմակերպած խոշոր հայագետներից մեկը Գ.Գյողակյանն է։

Գիտնականի վաստակը կոմիտասագիտության բնագավառում կարելի է քածանել երկու ոլորտից։ Առաջինը՝ ուսումնասիրությունն է նվիրված ազգային երաժշտական հանճարի կյանքին ու ստեղծագործությանը, երկրորդը՝ Կոմիտասի ժառանգության ակադեմիական հրատարակությունը։

Իր ուսումնասիրություններով Գ.Գյողակյանն, ըստ Էռիյան առաջինը, «Կոմիտաս» երևոյթը դուրս բերեց զուտ ազգային երաժշտական արվեստի ուղեծրից և քննարկեց XX դարի համաշխարհային մշակույթի համատեքստում («Կոմիտաս» մենագրությունը, Երևան, 1969, 2000, «Կոմիտասի ոճը և XX դարի երաժշտությունը» «Կոմիտասական» ժողովածուում, Երևան, 1969): Խննդիրն այն չէր, թե Կոմիտասն իր կենսագրությամբ եվրոպական մշակույթի հետ ինչ շփումներ է ունեցել. այս մասին շատ էր գրվել։ Ժամանակի համաշխարհային երաժշտական մշակույթի զարգացման ընթացքի և Կոմիտասի աշխարհայեցողական, գեղարվեստական, ստեղծագործական սկզբունքների համադրմամբ, Գ.Գյողակյանը մատմանչեց, որ կոմպոզիտորի ստեղծագործությունը անքակտելիորեն կապված է համաշխարհային երաժշտության զարգացման նոր դարաշրջանի հետ, Կոմիտասը նրանց շարքում է, ովքեր կանգնած էին այն հզոր նորոգող շարժման ակունքներին, որը կյանքի կոչեց մի ամբողջ ուղղություն XX դարի երաժշտության մեջ (Դերյուսի, Բարտոկ, Կողայ, Ստրավինիսկի)։

Կոմիտասյան ժառանգության վեր հանումը, որքան էլ զարմանալի թվա, մեր երաժշտության հարյուրամյա շմարված պարտքն է: Զարմանալի կարող է թվայ, որովհետև ազգային առաջին դասական ենք համարել նրան՝ ճանաչելով իր ժառանգության հազիվ փոքրիկ մասը:

Կոմիտասի աշխատությունների հրատարակումը դարձավ XX դարի երկու խոշոր հայ երաժշտի բոլորանվեր ծառայությունը հարազատ ժողովրդին և հայրենի գիտությանը: Կոմիտասի ժառանգության հրատարակման համար հսկայածավալ աշխատանք կատարեց պրոֆեսոր Ռ.Աքայանը. նրա կյանքի օրոք լույս տեսան Կոմիտասի Երկերի ժողովածուի առաջին 6 հատորները, ինչպես նաև պատրաստվեցին հրատարակության հաջորդ մի շարք հատորներ: Իննենականների սկզբի դժվար տարիներին Ռ.Աքայանն այդպես էլ չկարողացավ հայրենիքում միջոցներ գտնել և՝ ապավինելով սփյուռքի հայության աշակցությանը, Կոմիտասի ժառանգությունը տեղափոխեց ԱՄՆ: Սակայն նա չհասցրեց ավարտել սկսած գործը: Նրա մահից հետո Կոմիտասը, կարծեք ճակատագրով, մեկ անգամ ևս տարագրվեց, այս անգամ՝ ԱՄՆ, այս անգամ՝ իր ժառանգությամբ: Վերադարձեցին ԳԱ Արվեստի ինստիտուտի դեկանարները և Գ.Գյողակյանը հանձն առավ, երբեմն թերափարտ, երբեմն էլ ուղղակի անպատրաստ հատորների ակադեմիական հրատարակությունը: Կարճ ժամանակահատվածում՝ 1997-ից մինչև 2003 թվականը լույս տեսան Կոմիտասի Երկերի ժողովածուի 6 նոր հատորները: Եվ կարելի է հավաստել, որ դրանց հրատարակությունն իրագործված է Կոմիտասին վայել մակարդակով:

Գյողակյանի գործունեությունը իբրև երաժշտական քննադատ ծավալվել է հիմնականում 1950-1970-ական թվականներին: Նա ակտիվ կերպով աշխատակցում էր «Սովետական արվեստ»,

«Սովետակայա մուգիկա», «Մուգիկալմայա ժիզն» ամսագրերին, «Կոմունիստ». «Կոմսոմոլեց», «Սովետական Հայաստան» և այլ թերթերի: Նրա դատողությունները օպերային թատրոնի երկացանկային քաղաքականության, ազգային երաժշտական արվեստի զարգացման ուղիների, օպերային և բալետային պրեմյերաների, սիմֆոնիկ և կամերային նոր ստեղծագործությունների մասին աչքի էին ընկնում խորաքափանցությամբ, տեսակետների լայնությամբ, գրական վառ շարադրանքով: Նա միշտ գտնվել է մեր երաժշտական կյանքի իրադարձությունների կենտրոնում, պաշտպանելով նորը, հետաքրքրականը, տաղանդավորը:

1973 թվականին նրան շնորհվեց «1972 թվականի թերթերում և անսագրերում երաժշտաքննադատական լավագույն հոդվածի համար» ԽՍՀՄ կոմպոզիտորների միության մրցանակը:

Գ.Գյողսկյանի կյանքում մեծ տեղ է գրավել երաժշտական-հասարակական և կազմակերպչական գործունեությունը: Լինելով Հայաստանի կոմպոզիտորների միության երաժշտագիտության գծով քարտուղար, Հայաստանի ԳԱ արվեստի ինստիտուտի երաժշտական բաժնի վարիչ, այնուհետև նաև փոխտնօրին, նա անմիջականորեն մասնակցել է միջազգային, համամիութենական, հանրապետական գիտաժողովներից շատերի կազմակերպմանը: Այդ թվում հարկ է նշել Կոմիտասին (1969), Ալ. Սահմանիարյանին (1972), Ա.Խաչատրյանին (1973, 1993), Արմեն Տիգրանյանին (1981), Ռուբեն Մելքոնյանին (1983), Տ. Չուխաջյանին (1987) նպարզագույն վարչության մասնակցությամբ, «Հայ արվեստին նվիրված միջազգային չորրորդ սիմպոզիումը» (1985), «Քրիստոնեական Հայաստանի արվեստը» (2001) միջազգային գիտաժողովը և այլն: Նա դարձավ մի շարք գիտական ժողովածուների նախաձեռնողը և կազմող-խմբագիրը.

«Արամ Խոչատրյան», «Ալեքսանդր Սպենդիարյան», «Սովետական Հայաստանի արվեստը 60 տարում», «Ավանդույթներ և արդիականություն: Հայ երաժշտության հարցեր» շարքը և այլն, որոնք լայն արձագանք գտան մեզանում և արտասահմանում: Գյողակյանի գործունեությունն այդ բնագավառում զգալի չափով նպաստեց հայրենի երաժշտագիտության հեղինակության բարձրացմանը մեր հանրապետությունում և նրա սահմաններից դուրս:

Մեծ է գիտնականի վաստակը երիտասարդ մասնագետների պատրաստման գործում: Նրա գիտական դեկավարությամբ պաշտպանվել են 8 թեկնածուական ատենախոսություններ: Երեանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայում երկար տարիներ վարում է երաժշտագիտական մասնագիտական դասարան: Նրա սաների թվում կան հայտնի երաժիշտներ՝ արվեստագիտության դոկտոր, թեկնածուներ, պրոֆեսորներ, դոցենտներ:

Արվեստագիտության թեկնածու

Միեր Նավոյան

ГЕОРГИЙ ШМАВОНОВИЧ ГЕОДАКЯН

Заслуженный деятель искусств Армении, профессор Георгий Шмавонович Геодакян принадлежит к числу виднейших представителей современного армянского музыкоznания. Его научная, педагогическая, музыкально-общественная деятельность оценивается в контексте всей истории национальной музыковедческой школы, органически вписываясь в логику ее исторического развития.

Еще на рубеже XVIII-XIX-го веков переживавшая подъем армянская музыкально-теоретическая мысль в своем последующем развитии, благодаря деятельности крупнейших музыкантов и ученых Е.Тнтесяна, Комитаса и др., стала важной областью общего арменоведения. В советские годы в формировании новой отечественной музыковедческой школы основополагающую роль сыграли А.Шавердян, Х.Кушнарев, Г.Тигранов. Их капитальные труды получили высокую оценку, стали важнейшим звеном музыкального арменоведения, крепкой фактологической и научной основой для исследований ими же воспитанных известных ученых. В числе этих ученых – Р.Атаян, М.Брутян, Н.Тагмизян и начавший научную деятельность в 1950-е годы Г.Геодакян.

Г.Геодакян – авторитетный ученый, поддерживающий высокие критерии профессионализма в современном армянском музыкоznании. Его профессиональные навыки стали шлифоваться еще в средней специальной музыкальной школе имени П.Чайковского. В 1951-1952 гг. он окончил Ереванскую государственную консерваторию по двум специальностям – как пианист и музыковед, занимаясь в классах известных профессоров Г.Сараджева и Г.Тигранова. С 1953 по 1956 гг. прошел курс аспирантуры при кафедре теории музыки Московской консерватории имени П.Чайковского под руководством профессора Б.Ярустовского.

С самого начала его научной биографии, с 1957 года, деятельность Г.Геодакяна была связана с Институтом искусств АН Армении, где параллельно с научной работой, он занимал должности ученого секретаря, заведующего отделом музыки (с 1965 г.), а с 1979 года по сей день – заместителя директора по науке.

В 1960 году вышла в свет монография Геодакяна «Романос Меликян. Жизнь и творчество». «Уже в этой первой большой работе, - пишет музыковед М.Тер-Симонян, - с очевидностью проявились наиболее ценные качества Геодакяна-ученого: глубокое знание материала, самостоятельность подхода, неординарное освещение поставленных вопросов. Не следуя принятым оценкам, молодой ученый выдвигает свою точку зрения, показывая Романоса Меликяна как одну из самых масштабных фигур армянской музыки XX-го века... как выдающегося композитора, оказавшего глубокое влияние на дальнейшее развитие нашей музыки».

На основе тщательного изучения многочисленных материалов (письма, воспоминания современников, периодическая печать и т.д.) в книге уточнены многие факты биографии Романоса Меликяна, подробно освещены его эстетические взгляды, творческие связи с деятелями культуры. В центре внимания исследователя - эволюция творчества композитора, анализ музыкально-стилистических особенностей циклов «Осенние строки», «Змрухти», «Зар-вар». В этих анализах автор чутко и научно обоснованно выделяет новаторские завоевания композитора в области гармонии, фактуры, звукового колорита, имевшие важное значение в утверждении национального стиля армянской профессиональной музыки.

В исследовании «Очерк истории армянской музыки» (Х.Кушнарев, М. Мурадян, Г.Геодакян, 1963) Геодакян - автор раздела, посвященного армянской советской музыке. Это в нашем музыказнании один из первых обобщающих трудов по данной тематике. Освещая многообразие форм, жанров, творческих манер,

Геодакян создает целостную картину сложного пути развития национальной музыки в советский период (1920-1950-е годы).

И в дальнейшем тема армянской советской музыки – одна из основных в научных работах Геодакяна. Он курирует создание разделов по армянской музыке в многотомной «Истории музыки народов СССР», является автором этих разделов во 2-м, 4-м и частично 5-м томах, а также развернутого очерка истории армянской советской музыкальной культуры в сборнике «Армянское советское искусство за 60 лет». Критический анализ и обобщение материала помогают ученому показать основные тенденции развития армянской музыки советского периода. Сжатость, концентрированность изложения, историзм мышления, точность и выверенность оценок – основные достоинства этих работ Геодакяна.

Исследование творческих явлений в общекультурном контексте, на фоне мирового музыкального искусства, с учетом конкретной логики исторического развития является одним из важнейших научных принципов Геодакяна. Такой характер имеют исследования, посвященные Александру Спендиарову, Араму Хачатуряну и, в особенности, Комитасу.

Историко-критический этюд «Опера «Алмаст» в сборнике «А. Спендиаров» (1973 г.), как писала музыковед М. Берко, – «это острый, проницательный, принципиальный взгляд на главную линию спендиаровского творчества.

Интересно и доказательно прослежено в очерке формирование творческой личности композитора. Правильными представляются оценки по-новому освещенных фактов его биографии, взаимоотношения в сфере современного ему искусства... Очень важно, что в статье проанализировано место Спендиарова как художника начала XX века, указаны опасности,



АП
8964

подстерегавшие композитора среди бурь и исканий начала столетия. Этим еще более значительно подчеркивается самый важный период спендиаровского творчества - врастание в культуру родного народа.

Большой раздел статьи посвящен судьбе оперы «Алмаст». Автор последовательно и аргументированно излагает свою точку зрения на концепцию оперы, особенности драматургии ее образов, защищая спендиаровский замысел от «поправок» и излишне прямолинейных трактовок. Г.Геодакян раскрывает сложность психологических, исторических особенностей «Алмаст», и с его доказательствами трудно не согласиться».

В работах об А.Хачатуриане Геодакян подчеркивает ярко национальный и новаторский характер творчества композитора. Анализируя ладо-гармоническую систему музыки Хачатуриана, Геодакян делает важные теоретические обобщения, обосновывая новаторский характер этой системы. Основу музыкального стиля Хачатуриана он видит в сопряжении ладовых систем армянской (и шире - восточной) музыки с современной хроматической (пандидатнической) тональностью. «И всегда это сопряжение выступает, - заключает он, - как органический синтез, нерасторжимое целое, где восточный склад мелоса раскрывает хроматическую тональность, с другой же стороны - сам раскрывается через нее. Открытие этого синтеза было одним из замечательнейших художнических прозрений века» («Традиционное и новаторское в музыке А.Хачатуриана», Сборник «Музыкальный современник», Выпуск 3, Москва, 1979).

В своей исследовательской работе Геодакян стремится к рассмотрению явлений, даже уже изученных, как минимум, с новых позиций, под новым углом зрения, в максимуме же - выдвигает и обосновывает свою собственную теорию, собственную концепцию.

Вот уже около двухсот лет основной проблемой, стоящей перед армянской музыкальной медиевистикой, остается вопрос

расшифровки хазов. В этой области усилия армянских и зарубежных именитых ученых и по сей день не достигли желаемой цели. Геодакян – один из немногих, чьи исследования значительно продвинули вперед современное хазоведение, что стало возможным благодаря новому ракурсу исследования, новым методологическим подходам («Возможные пути расшифровки армянской хазовой нотописи». В сборнике «Традиции и современность. Вопросы армянской музыки», книга 2, Ереван, 1996).

К самым большим завоеваниям научной мысли Геодакяна относится, на наш взгляд, «теория металада». Если в будущем станет возможным изложить весь ход развития армянской музыкальной мысли, то, в главном, он предстанет музыкально-теоретическими положениями Давида Анахта, богатым наследием армянских средневековых музыкантов-философов, затем в новом времени – созданной А.Лимонджяном армянской нотописью, теоретическими открытиями Комитаса, подтверждающими самобытность армянской музыки, а также разработанными армянскими учеными XX века теоретическими системами, ряд которых завершает вышеупомянутая теория Г.Геодакяна.

Эта теоретическая концепция, обоснованная изучением нескольких тысяч образцов армянского народного музыкального искусства, соотносима с самым высоким уровнем музыкально-теоретической мысли XX века. Наконец, столь обобщенная теория может соприкасаться со сложными сферами гносеологии, а также с целым рядом других фундаментальных наук («Черты ладовой системы армянской народной музыки». В сборнике «Традиции и современность. Вопросы армянской музыки», книга 1, Ереван, 1986; «Функциональные связи тонов в звуко-высотной системе армянской народной музыки». В сборнике «Традиции и современность. Вопросы армянской музыки», книга 2, Ереван, 1996).

Сегодня может показаться, что Комитас, как основоположник армянской классической музыки и армянской национальной композиторской школы, с самого начала воспринимался в истинном своем историческом значении, с установившейся оценкой художественного наследия. Однако это не так: эволюция комитасоведения очевидна. И одним из крупных арменоведов, способствовавших этой эволюции, направивших ее в принципиально новое русло, стал Г.Геодакян.

Заслуги ученого в области комитасоведения можно разделить на две сферы. Первая – это исследования, посвященные жизни и творчеству национального музыкального гения, вторая – академическое издание наследия Комитаса.

Своими исследованиями Геодакян по существу первым вывел «феномен Комитаса» за рамки чисто национального искусства и рассмотрел его в контексте мировой музыкальной культуры XX века (монография «Комитас», Ереван, 1969, 2000, «Стиль Комитаса и музыка XX века» в сборнике «Комитасакан», Ереван, 1969). Задача заключалась не в том, чтобы показать имевшиеся в биографии композитора связи с европейским искусством.. Об этом много писалось. Сопоставляя процесс развития мировой музыкальной культуры того времени и мировоззренческие, эстетические, творческие принципы Комитаса, Геодакян показал, что творчество композитора было неразрывно связано с новой эпохой в развитии мировой музыки, он был среди тех, кто стоял у истоков могучего обновляющего движения, которое дало жизнь целому направлению в музыке XX века (Дебюсси, Барток, Кодай, Стравинский).

Издание комитасовского наследия, каким бы странным это ни казалось, является почти столетним неоплатным долгом нашей музыки, - странным, ибо мы признали Комитаса первым национальным классиком, зная лишь малую часть его наследия.

Издание трудов Комитаса стало самоотверженным служением родному народу и отечественной науке двух крупных армянских музыкантов XX века. Огромную работу по изданию наследия Комитаса проделал Р.А.Атаян (при его жизни были опубликованы 6 томов Собрания сочинений Комитаса, а также подготовлен к печати ряд последующих томов). В начале трудных 90-х годов профессор Р.Атаян так и не смог найти на родине средств для продолжения начатого дела и, надеясь на помочь армян диаспоры, перевез подготовленные им материалы в США. Однако завершить начатую работу он не успел. После его смерти наследие Комитаса, будто по воле злого рока, снова оказалось на чужбине. Его вернуло руководство Института искусств Академии наук. Г.Геодакяну было поручено возглавить работу по изданию последующих томов, порой не до конца завершенных, а порой и просто не готовых к изданию. За короткий срок – с 1997 по 2003 гг. – вышли в свет 6 новых томов Собрания сочинений Комитаса. И можно сказать, что их издание осуществлено на подобающем Комитасу уровне.

Деятельность Геодакяна как музыкального критика падает в основном на 1950-1970 годы..Он активно сотрудничал в журналах «Советакан арвест» («Советское искусство»), «Советская музыка», «Музыкальная жизнь», газетах «Коммунист», «Комсомолец», «Советакан Айастан» и др. Его суждения о репертуарной политике оперного театра, путях развития национального музыкального искусства, о премьерах оперных и балетных спектаклей, о новых симфонических и камерных произведениях отличались большой проницательностью, широтой взглядов, яркостью литературного изложения. Он всегда находился в гуще нашей музыкальной жизни, поддерживая все новое, интересное, талантливое.

В 1973 году ему была присуждена премия Союза композиторов СССР «За лучшую музыкально-критическую статью в газетах и журналах 1972 года».

Большое место в жизни Геодакяна занимала музыкально-общественная и организаторская деятельность. Будучи секретарем Союза композиторов Армении по музыказнанию, заведующим отделом музыки, а затем и заместителем директора по науке Института искусств АН Армении, он принимал непосредственное участие в организации многих международных, общесоюзных, республиканских научных форумов. В их числе можно отметить научные конференции, посвященные Комитасу(1969), Ал.Спендиарову(1972), А.Хачатуряну (1973, 1993), Армену Тиграняну (1981), Романосу Меликяну (1983), Т.Чухаджяну (1987), Четверый международный симпозиум по армянскому искусству (1985), Международную научную конференцию «Искусство христианской Армении» (2001) и т.д. Он явился инициатором и составителем-редактором целого ряда научных сборников – «Арам Хачатурян», «Александр Спендиаров», «Искусство Армении за 60 лет», серии «Традиции и современность. Вопросы армянской музыки» и т.д., - которые нашли широкий отклик у нас и за рубежом. Деятельность Геодакяна в этой области в значительной степени способствовала поднятию авторитета отечественного музыкования в нашей республике и за ее пределами.

Велики заслуги ученого в деле подготовки молодых кадров. Под его руководством были защищены 8 кандидатских диссертаций. На протяжении многих лет он ведет в Ереванской гос. консерватории им. Комитаса специальный класс по музыказнанию. Среди его воспитанников немало известных музыкантов – доктор и кандидаты наук, профессора, доценты.

Кандидат искусствоведения
Мгер Навоян

ԳԵՎՈՐԳ ՇՄԱՎՈՆԻ ԳՅՈՒԱԿՅԱՆԻ ԿՅԱՆՔԻ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԻՄՍԱԿԱՆ ՏԱՐԵԹՎԵՐԸ

1928 թ. ոգոստոսի 12-ին ծնվել է Լենինականում (այժմ Գյումրի): Որդին է Ծմավոն Բաղդասարի Գյոդակյանի (ծառայող, տնտեսագետ) և Զավահիր Գրիգորի Յարամիշյան-Գյոդակյանի (տնտեսուհի):

1928 ընտանիքի հետ տեղափոխվել է Երևան:

1946 ուշեւ մեղալով ավարտել է Երևանի Ֆ.Զերժինսկու անվան միջնակարգ դպրոցը:

1946 ավարտել է Երևանի Պ.Չայկովսկու անվան միջնակարգ մասնագիտական երաժշտական դպրոցը (Եվ. Ա. Խոսրովյանի դաշնամուրային դասարանը):

1951 գերազանցությամբ ավարտել է Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի տեսական-կոմպոզիտորական բաժինը (գիտական դեկան՝ պրոֆ. Գ. Տիգրանով): Եղել է Ստալինյան կըրթաբոշակառու:

1952 ավարտել է Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի դաշնամուրային բաժինը (պրոֆ.. Գ. Սարա-Ջյանի դասարանը):

1953-1956 սովորել է Հայաստանի ԳԱ ասպիրանտուրայում՝ ուսումնառությունն անցկացնելով Մոսկվայի Պ.Չայկովսկու անվան պետական կոնսերվատորիայում (տեսության ամբիոն, գիտական դեկան՝ պրոֆ. Բ. Յալուտովսկի):

1957-1960 Հայաստանի ԳԱ արվեստների տեսության և պատմության սեկտորի (1958-ից՝ Արվեստի ինստիտուտ) կրտսեր գիտական աշխատակից:

1959-ից Հայաստանի կոմպոզիտորների միության անդամ:

1960-1965 Հայկական ՍՍՀ ԳԱ Արվեստի ինստիտուտի գիտական քարտուզար:

1960-ից ՀՍՍՀ ԳԱ Արվեստի ինստիտուտի գիտական խորհրդի անդամ

1961 Ծնորհվել է արվեստագիտության թեկնածուի գիտական աստիճան (ատենախոսությունը՝ «Ռոմանոս Մելիքյան: Կյանքը և ստեղծագործությունը»):

1962-1983 Երևանի Ալ.Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի թատրոնի գեղարվեստական խորհրդի անդամ:

1964 Շնորհվել է ավագ գիտական աշխատակցի գիտական կոչում:

1965-ից ՀՍՍՀ ԳԱ Արվեստի ինստիտուտի երաժշտական բաժնի վարիչ:

1968-1995 Հայաստանի կոմպոզիտորների միության վարչության անդամ:

1973-1991 Հայաստանի կոմպոզիտորների միության վարչության քարտուղար երաժշտագիտության գծով:

1973 Արժանացել է ՍՍՀՄ Կոմպոզիտորների միության «Յա լուշայու մազակալինո-կրիտիկական աշխատական ամբիոն»:

1973 Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի դասախոս (Երաժշտության տեսության ամբիոն):

1973-1989 «Սովետական արվեստ» ամսագրի խմբագրական խորհրդի անդամ:

1977 Շնորհվել է դոցենտի գիտական կոչում:

1979-ից ՀՍՍՀ ԳԱ Արվեստի ինստիտուտի փոխտնօրեն գիտական գծով:

1979-1991 ՍՍՀՄ Կոմպոզիտորների միության վարչության անդամ:

1980 Արժանացել է Հայաստանի արվեստի վաստակավոր գործչի պատվավոր կոչման:

1988-2001 ՀՍՍՀ ԳԱ (ՀՀ ԳԱԱ) «Լրաբեր հասարակական գիտությունների» ամսագրի խմբագրական խորհրդի անդամ:

1993-ից Մոսկվայում հրատարակվող «Մազակալինու աշխատական ամբիոն»:

1995-ից «Հայկական համառոտ հանրագիտարանի» խմբագրական խորհրդի անդամ

1997-ից Երևանի Կոմիտասի անվան կոնսերվատորիայի պրոֆեսոր (Երաժշտության պատմության ամբիոն):

1998-ից «Երաժշտական Հայաստան» ամսագրի խմբագրական խորհրդի անդամ:

2000 Հումանիզմի պրոբլեմների ակադեմիայի ակադեմիկոս:

2003 Արժանացել է ՀՀ ԳԱԱ «Վաստակագրի»՝ «Հայաստանի հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի նախագահությունը հավաստում է գիտության բնագավառում ունեցած Ձեր մեծ վաստակը»:

ОСНОВНЫЕ ДАТЫ ЖИЗНИ И ДЕЯТЕЛЬНОСТИ ГЕОРГИЯ ШМАВОНОВИЧА ГЕОДАКЯНА

Родился 12 августа 1928 года в Ленинакане (ныне Гюмри) в семье Шмавона Багдасаровича Геодакяна (служащий, экономист) и Джаваир Григорьевны Ярамышевой-Геодакян.

1928 с семьей переезжает в Ереван.

1946 с золотой медалью окончил Ереванскую среднюю школу имени Ф.Дзержинского.

1946 окончил Ереванскую музыкальную школу-десятилетку имени П.И.Чайковского (по классу фортепиано Е.А.Хосровян).

1951 «с отличием» окончил теоретико-композиторский факультет Ереванской государственной консерватории имени Комитаса (научный руководитель проф. Г.Г.Тигранов), с 1948 по 1951 гг. был Сталинским стипендиатом.

1952 окончил фортепианный факультет Ереванской государственной консерватории имени Комитаса (по классу проф. Г.В.Сараджева).

1953-1956 аспирант Академии наук Армении (проходил учебу при кафедре теории музыки Московской государственной консерватории имени П.И.Чайковского, научный руководитель проф. Б.М.Ярустовский).

1957-1960 младший научный сотрудник Сектора теории и истории искусств (с 1958 – Институт искусств) Академии наук Армении.

С 1959 – член Союза композиторов Армении

1960-1965 ученый секретарь Института искусств Академии наук Арм. ССР.

С 1960-го член Ученого совета Института искусств Академии наук Арм. ССР.

1961 присуждена ученая степень кандидата искусствоведения (диссертация: «Романос Меликян. Жизнь и творчество»).

1962-1983 член художественного совета Ереванского театра оперы и балета имени Ал.Спендиарова.

1964 присвоено ученое звание старшего научного сотрудника.

С 1965-го заведующий отделом музыки Института искусств

Академии наук Арм. ССР

1968-1995 член Правления Союза композиторов Армении.

1973-1991 секретарь Правления Союза композиторов Армении.

1973 преподаватель Ереванской государственной консерватории имени Комитаса (кафедра теории музыки).

1973-1989 член редакционной коллегии журнала «Советакан арвест» («Советское искусство»).

1973 удостоен премии Союза композиторов СССР «За лучшую музыкально-критическую статью в газетах и журналах 1972 года».

1977 присвоено ученое звание доцента.

С **1979**-го заместитель директора по науке Института искусств Академии наук Арм. ССР.

1979-1991 член Правления Союза композиторов СССР.

1980 удостоен почетного звания «Заслуженный деятель искусств Армении».

1988-2001 член редакционной коллегии журнала «Вестник общественных наук» Академии наук Арм. ССР.

С **1993**-го научный консультант «Музыкального энциклопедического словаря» (Москва).

С **1995**-го член редакционной коллегии «Армянской краткой энциклопедии» (в 4-х томах).

С **1997**-го профессор Ереванской государственной консерватории имени Комитаса (кафедра истории музыки).

С **1998**-го член редакционной коллегии журнала «Еражштакан Айастан» («Музыкальная Армения»).

2000 избран действительным членом (академиком) Академии проблем гуманизма.

2003 удостоен почетной грамоты «Вастакагир» Президиума Национальной академии наук Республики Армения «за имеющиеся большие заслуги в области науки».

ԱԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

БИБЛИОГРАФИЯ

1951

Классик армянской музыки. К 80-летию со дня рождения А.Спендиарова // Сталинец.- 1951.-2 ноября

Հայ երաժշտության դասականը [Ա.Սպենդիարյանի ծննդյան 80-ամյակի առթիվ]

1952

Армянская филармония // "Советская музыка", 1952, №1.- с. 86-88

Հայկական ֆիլհարմոնիան

Авторские концерты Л. Книппера и А.Бабаджаняна // Коммунист.- 1952.- 9 января

Լ.Կնիպպերի և Ա.Բաբաջանյանի հեղինակային համերգները

1957

Новая книга о Х. Кара-Мурзе // Известия АН АрмССР.Общественные науки.- 1957, № 6 .- с. 124-127 Рец. на книгу М.Мурадяна «Х.Кара-Мурза и внедрение многоголосия в армянскую музыку»

Նոր գիրք Կարա-Մուրզայի մասին // Գրախ.: Մ. Մուրադյան, Քրիստափոր Կարա-Մուրզան և բազմաձայնության արմատավորումը հայ երաժշտության մեջ // Եր., ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1956

О специфике оперного образа // Известия АН АрмССР. Общественные науки.- 1957, № 7.- с. 123-136

Օպերային կերպարի յուրահասնկության մասին

Как понимать музыку [Музыкальный лекторий] // Комсомолец.- 1957.- 23 июня

Ինչպէ՞ս հասկանալ երաժշտությունը

Народная песня [Музыкальный лекторий] // Комсомолец.- 1957.- 30 июня

Народная песня [Музыкальный лекторий] // Комсомолец.- 1957.- 30 июня
Ժողովրդական երգը

Камерная музыка [Музыкальный лекторий] // Комсомолец.- 1957.- 7 июля
Կամերային երաժշտությունը

Симфоническая музыка [Музыкальный лекторий] // Комсомолец.- 1957.- 16 авг.
Սիմֆոնիկ երաժշտությունը

Новая опера о современности [Опера А.Бабаева «Арцваберд» на сцене Ереванского оперного театра] // Комсомолец.-1957.- 15 ноября
Նոր օպերա արդիականության մասին [Ա.Բաբաևի «Արծվաբերդ» օպերայի պրեմիերան]

«Сос и Вардитер» на оперной сцене [премьера оперы В.Тиграняна] // Коммунист.- 1957.- 19 ноября
Վ. Տիգրանյանի «Սոս և Վարդիթեր» օպերային բեմում

«Արծվաբերդ» [Ա.Բաբաևի «Արծվաբերդ» օպերայի բեմադրությունը Երևանի օպերային թատրոնում] // Совет Арменистаны, թերք ադրբեջաներեն. – 1957.- 29 դեկտեմբերի: Համահեղինակ՝ Ս.Ռիզաև
Новая опера о современности [Опера А.Бабаева «Арцваберд» на сцене Ереванского оперного театра] (соавтор С.Ризаев)

1958

На сцене – «Князь Игорь» [Спектакли Большого театра СССР в Ереване] // Коммунист.-1958.- 7 сентября
Բեմում՝ «Գյուղան Իօնը» օպերան և [Մեծ թատրոնի ներկայացումները Երևանում]

Новая опера о современности ["Арцваберд" А.Бабаева]
// "Музыкальная жизнь", 1957, № 2.- с.5-7
Նոր օպերա արդիականության մասին [Ա.Բաբաևի «Արծվաբերդ» օպերայի պրեմիերան]

Ուսմանու Սելիքյանի հուշերը Ալ. Սպենդիարյանի մասին // «Սովետական արվեստ», 1958, №7.- էջ 65-67 (հրապարակում)
Վոспоминания Романоса Меликяна о А.Спендиарове (публикация)

1959

Успех молодого дирижера [О концерте Мартына Нерсесяна]. // Коммунист. - . 1959.- 8 февраля

Երիտասարդ դիրիժորի հաջողությունը [Մարտին Ներսեսյանի համերգի մասին]

Ценный вклад в науку о музыке // Коммунист.- 1959.- 9 октября.
Рецензия на кн.: Кушнарев Х.С. Вопросы истории и теории армянской монодической музыки – Ленинград, Гос. муз. изд-во, 1958

Արժեքավոր ներդրում երաժշտագիտության մեջ [Գրախ.: Ք.Քոչինարյան, Հայ մոնողիկ երաժշտության պատմության և տեսության հարցեր]

Ինչպես լսել սիմֆոնիկ երաժշտությունը // «Սովետական արվեստ». - 1959, № 8.- էջ 39-41

Как слушать симфоническую музыку

1960

Ուսմանու Սելիքյան. Կյանքը և ստեղծագործությունը // Եր.: ՀՍՍՌ ԳԱ հրատ., 1960.- 246 էջ

Романос Меликян. Жизнь и творчество

Ժամանակակից թեման օպերային բեմում // “Թատրոնը՝ ժողովրդին”, Եր.: ՀԹԸ հրատ., 1960.- էջ 100-116

Современная тема на оперной сцене

Камерно-инструментальная музыка (соавтор М.Тер-Симонян) // "Музыка Советской Армении", М., "Музгиз", 1960. - с.213-258

Կամերային-գործիքային երաժշտությունը (համահեղինակ՝ Մ.Տեր-Սիմոնյան)

Поэт фортепиано [К 150-летию со дня рождения Фридриха Шопена] // Комсомолец.- 1960.- 24 февраля
Դաշնամուրի պոետը [Ֆրիդերիկ Շոպենի ծննդյան 150-ամյակի առթիվ]

«Бал-маскарад» [К постановке оперы Верди в Ереванском оперном театре] // Коммунист.- 1960.- 19 марта

«Պարահանդես-դիմակահանդես» [Վերդիի օպերայի բեմադրությունը Երևանում]

«Севилья» [Опера К.Караева. Гастроли театра оперы и балета им. Ахундова]. // Коммунист.- 1960.- 21 июля

Կարա Կարաևի «Սեվիլի» օպերան Բաքվի օպերայի և բալետի թատրոնի խաղացանկում

Ժողովրդական կյանքի երգիչ [նվիրված Ա.Տիգրանյանի 80-ամյակին] // «Սովետական արվեստ», 1960, №2.- էջ 36-40

